ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/106

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Բողոք բերող՝ «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ
Համանման բողոք բերող՝ «Էփրան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ռամազյանի, Ա. Հակոբյանի,
«ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,
«Էփրան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Է. Առաքելյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթ, ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)

կողմից 19.11.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, «Էփրան» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն 1) կողմից 23.11.2021թ.-ին ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ համանման բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 11.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները:
2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Պայմանագիր կնքելու մասին որոշումը»:
3. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանացություններ:

Ընկերություն 1-ը, ներկայացրած համանման բողոքով, Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 10.11.2021թ-ի տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները,
2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ:

Բողոքներ քննող անձին «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 19.11.2021թ.-ին:

22.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/106 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձին «Էփրան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մակագրվել է 23.11.2021թ.-ին:

23.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված համանման բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/106 համարի ծածկագիրը:

26.11.2021թ.-ին և 10.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.12.2021թ.-ին:

2. <u>«ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ն 19.11.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի (կցվում է) համաձայն՝ Ընթացակարգը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 21-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն:

Հրավերին կից Ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձի հետ պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարման փուլում առաջացող՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերը այդ թվում ԱԱՀ հաշվանցվում և ՀՀ պետական բյուջե են վճարվում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձին վճարման ենթակա գումարից, ինչպես նաև Պատվիրատուի կողմից Կատարողի փոխարեն կատարված մաքսազերծման, լոգիստիկ կամ ցանկացած այլ ծառայության դիմաց վճարները:

Տվյալ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՆՊԿ ԷԼԼԻՐՈՆ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. ժամը 16:00 նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ բաժնի համաձայն՝ Ընթացակարգի մասնակիցները 2021թ.

հոկտեմբերի 5-ին հրավիրվում են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման, որի տևողությունը սահմանվում է 30 րոպե: Բանակցությունները կանցկացվեն ZOOM հավելվածի միջոցով, որի էլեկտրոնային հղումը կուղարկվի մասնակիցների էլ. փոստին: Բանակցությունների համար սահմանվում է նվազեցման շեմ, այն է՝ 50 մլն. ՀՀ դրամը, բանակցությունները անցկացվելու են ռուսերեն լեզվով:

Անցկացված բանակցություններին վերաբերյալ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն 11.10.2021թ. ներկայացրել է բողոք, որով պահանջել է՝

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 05.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանացություններ:

կամ

3. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող Գ. Ներսիսյանը 22.10.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/75 որոշմամբ բավարարել է բողոքը, որով որոշել է՝

1.Դադարեցնել հանձնաժողովի 05.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները,

2.Անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ:

Վերը նշված որոշման արդյունքում կրկին անցկացվել են միաժամանակյա նոր բանակցություններ: Բանակցությունների ժամանակ մասնակիցների կողմից կատարված առաջարկության համաձայն՝ որոշում կայացվեց, որ բոլոր մասնակիցները, անկախ ՀՀ ռեզիդենտ լինելու հանմանքից, իրենց գնային առաջարկները պետք է ներկայացնեն որպես ԱԱՀ ներառող գնային առաջարկ, մասնավորապես.

Zoom /26:15 րոպե/ «Էկրա Կովկաս» Ընկերության ներկայացուցիչը առաջարկեց, որ բոլոր մասնակիցները գնային առաջարկները միասնական ներկայացնեն՝ ներառյալ ԱԱՀ, այսինքն ներկայացրած գնային առաջարկի թիվը ներառի նաև ԱԱՀ գումարը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի Հրավերին կից Ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձի հետ պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարման փուլում առաջացող՝

ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերը այդ թվում ԱԱՀ հաշվանցվում և ՀՀ պետական բյուջե են վճարվում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձին վճարման ենթակա գումարից

Zoom /28:05 րոպե/՝ վարողը անմիջապես պատասխանեց, որ չէ որ ոչ ռեզիդենտ ընկերությունները չեն վճարում ԱԱՀ: Բայց առաջարկեց քննարկել այդ հարցը:

Zoom /28:20 րոպե/՝ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչը հայտնեց հետևյալը. - с учетом положений приложения № 18 к Договору о Евразийском экономическом союзе (подписан в г. Астане 29.05.2014), а так же принимая во внимание, что в рамках вышеназванного конкурса ЗАО «НПК Эллирон» планирует осуществлять работы более двух лет, что в силу налогового законодательства Республики Армения устанавливает для нашей компании обязанность иметь постоянное представительство на территории Республики Армения, то ЗАО «НПК Эллирон» во время переговоров будет подавать ценовое предложение, включающее в себя налог на добавленную стоимость (НДС).

Zoom /28:35 րոպե/՝ վարողը հայտնեց հետևայլը. -այդ դեպքում առաջարկում եմ բոլորը ներկայացնեն իրենց գնային առաջարկները ներկայացնեն՝ ներարյալ ԱԱՀ-ի թիվը, հիմք ընդունելով մեծամասնության կարծիքը և այստեղ համատեղ կայացրած որոշումը: Նույնը հնչում է ռուսերեն և նշվում է, որ այդ որոշումը կայացվել է մեծամացնության որոշմամբ:

Բանակցությունների ընթացքում «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից որպես վերջնական գնային առաջարկ ներկայացվեց հետևյալ գնային առաջարկը՝ 11,100,000.0 ՀՀ դրամը՝ ներառյալ ԱԱՀ:

Բանակցությունների արդյունքները արձանագրվել են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.10.2021թ. թիվ 6 արձանագրությունում (կցվում է), որի 7-րդ բաժնի համաձայն՝ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից բանակցությունների արդյունքում ներկայացրած գնային առաջարկները հետևյալն է՝ 11,100,000.0 ՀՀ դրամը:

Այնուհետև, www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման (կցվում է) համաձայն՝ արձանագրվել է հետևյալը.

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	***Մասնակցի անվանումը***	***Ընտրված մասնակից*** */ընտրված մասնակցի համար նշել "X"/*	***Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, հազ. դրամ/***
1	*«Էփրան» ՍՊԸ*	*X*	*7,000,000.0*

2	*ՍՊԸ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» / ACE Automation LLC*		*7,177,945.95*
3	*«Արհովշին» ՍՊԸ*		*9,208,333.333*
4	*«Ռուսատոմ Սերվիս» ԲԸ*		*9,625,000.0*
4	*«Էկրա Կովկաս» ՍՊԸ*		*9,625,000.0*
5	*«Կասկադ Էներգո» ՍՊԸ*		*10,833,333.333*
6	***«ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ***		***11,100,000.0***
7	*«Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ*		*12,540,000.0*

Այսպիսով, www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կոմից սահմանված կարգի համաձայն ներկայացված և ԱԱՀ գումարը ներառող գնային առաջարկը դիտարկվել է որպես առանց ԱԱՀ գնային առաջարկ, համեմատությունը իրականացվել է հենց այդ թվի հետ /չի հանվել ԱԱՀ գումարը/, և համապատասխանաբար որոշվել է, որ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ն զբաղեցնում է 6-րդ տեղը:

«ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին ուղղված 15.11.2021թ. թիվ 3289 գրությամբ (կցվում է) հայտնել է հետևյալը.

«10 ноября 2021 года состоялись переговоры по снижению цены договора в рамках конкурса на право заключения договора на выполнение строительно-монтажных и пусконаладочных работ при сооружении нового ОРУ-110/220 кВ на отдельно выделенной площадке ААЭС (код процедуры конкурса HAEK-BMAShDzB-2/21).

Перед началом переговоров представителем ЗАО «НПК Эллирон» А.Е. Трошенковым было отмечено, что с учетом положений приложения № 18 к Договору о Евразийском экономическом союзе (подписан в г. Астане 29.05.2014), а так же принимая во внимание, что в рамках вышеназванного конкурса ЗАО «НПК Эллирон» планирует осуществлять работы более двух лет, что в силу налогового законодательства Республики Армения устанавливает для нашей компании обязанность иметь постоянное представительство на территории Республики Армения, то ЗАО «НПК Эллирон» во время переговоров будет подавать ценовое предложение, включающее в себя налог на добавленную стоимость (НДС). Данное предложение было единогласно принято со стороны заседающей оценочной комиссии, о чем свидетельствует запись переговоров.

Вопреки вышеизложенному, в разделе 7 «Цена, предложенная каждым из участников» протокола № 6 Заседания оценочной комиссии (далее – протокол № 6) указано, что в цену договора, предложенную ЗАО «НПК Эллирон», НДС не включен.

В связи с этим стоит отметить, что некорректная и противоречащая своему же принятому решению оценка комиссией ценового предложения ЗАО «НПК Эллирон» повлияла на итоговое место, присвоенное участнику закупки.

Учитывая изложенное, просим Вас внести изменения в протокол № 6 и присвоить ЗАО «НПК Эллирон» соответствующее его ценовому предложению (11 100 000 000,0 драмов РА с учетом НДС) место участника закупки».

Վերոհիշյալ գրությանը պատասխան չի ստացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ընթացակարգի հրավերին կից Ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձի հետ պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարման փուլում առաջացող՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերը այդ թվում ԱԱՀ հաշվանցվում և ՀՀ պետական բյուջե են

վճարվում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձին վճարման ենթակա գումարից, ինչպես նաև Պատվիրատուի կողմից Կատարողի փոխարեն կատարված մաքսազերծման, լոգիստիկ կամ ցանկացած այլ ծառայության դիմաց վճարները:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկների արձանագրման փուլում թույլ է տրվել կոպիտ խախտում, քանի որ հանձնաժողովը ամրագրելով ներկայացված գնային առաջարկները «Պայմանագիր կնքելու որոշման» մեջ՝ խախտել է բանակցությունների ժամանակ իր իսկ ընդունած որոշումը:

Մասնավորապես, բանակցությունները վարողը լսելով մասնակիցների առաջարկությունները գնային առաջարկներ ներկայացնելու կարգի վերաբերյալ և հաշվի առնելով «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի ներկայացրած հիմնավորումները, Zoom 28:35 րոպեյում հայտնեց հետևայլը. -այդ դեպքում առաջարկում եմ բոլորը ներկայացնեն իրենց գնային առաջարկները՝ ներարյալ ԱԱՀ-ի թիվը, հիմք ընդունելով մեծամասնության կարծիքը և այստեղ համատեղ կայացրած որոշումը: Նույնը հնչում է ռուսերեն և նշվում է, որ այդ որոշումը կայացվել է մեծամացնության որոշմամբ:

Բանակցությունների ընթացքում «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից որպես վերջնական գնային առաջարկ ներկայացվեց հետևյալ գնային առաջարկը՝ 11,100,000.0 ՀՀ դրամը՝ ներառյալ ԱԱՀ:

Սակայն գնահատող հանձնաժողովը խախտելով բանակցությունների ժամանակ իր իսկ ընդունած և մասնակիցների համար հնչեցրած որոշումը՝ www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կոմից սահմանված կարգի համաձայն ներկայացված և ԱԱՀ ներառող գնային առաջարկը դիտարկել է որպես առանց ԱԱՀ գնային առաջարկ, համեմատությունը իրականացվել է այդ թվի հետ /չի հանվել ԱԱՀ գումարը/, և համապատասխանաբար որոշվել է, որ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ն զբաղեցնում է 6-րդ տեղը:

«ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին ուղղված 15.11.2021թ. թիվ 3289 գրությամբ (կցվում է) հայտնել է հետևյալը.

«10 ноября 2021 года состоялись переговоры по снижению цены договора в рамках конкурса на право заключения договора на выполнение строительно-монтажных и пусконаладочных работ при сооружении нового ОРУ-110/220 кВ на отдельно выделенной площадке ААЭС (код процедуры конкурса HAEK-BMAShDzB-2/21).

Перед началом переговоров представителем ЗАО «НПК Эллирон» А.Е. Трошенковым было отмечено, что с учетом положений приложения № 18 к Договору о Евразийском экономическом союзе (подписан в г. Астане 29.05.2014), а так же принимая во внимание, что в рамках вышеназванного конкурса ЗАО «НПК Эллирон» планирует осуществлять работы более двух лет, что в силу налогового законодательства Республики Армения устанавливает для нашей компании обязанность иметь постоянное представительство на территории Республики Армения, то ЗАО «НПК Эллирон» во время переговоров будет подавать ценовое предложение, включающее в себя налог на добавленную стоимость (НДС). Данное предложение было единогласно принято со стороны заседающей оценочной комиссии, о чем свидетельствует запись переговоров.

Вопреки вышеизложенному, в разделе 7 «Цена, предложенная каждым из участников» протокола № 6 Заседания оценочной комиссии (далее – протокол № 6) указано, что в цену договора, предложенную ЗАО «НПК Эллирон», НДС не включен.

В связи с этим стоит отметить, что некорректная и противоречащая своему же принятому решению оценка комиссией ценового предложения ЗАО «НПК Эллирон» повлияла на итоговое место, присвоенное участнику закупки.

Учитывая изложенное, просим Вас внести изменения в протокол № 6 и присвоить ЗАО «НПК Эллирон» соответствующее его ценовому предложению (11 100 000 000,0 драмов РА с учетом НДС) место участника закупки».

Վերոհիշյալ գրությանը պատասխան չի ստացվել:

Վերոհիշհալի արդյունքում հանձնաժողովը դրսևորել է խտրական մոտեցում մասնակիցների նկատմամբ, բանակցությունների անցկացման ժամանակ չի ապահովել միասնական կանոններով և ոչ խտրական հիմունքներով բանակցությունների անցկացում, մասնակիցների համար մասնակցելու իրավահավասարություն, որն էլ իր հերթին հանգեցրել է գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքի խախտմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:»:

Ելնելով վերոգրյալից՝ «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 11.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Պայմանագիր կնքելու մասին որոշումը»:

3. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանացություններ:

Ընկերությունը 29.11.2021թ.-ին ներկայացրած բողոի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից 19.11.2021թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/106 բողոքը:

Ինչպես նշել ենք ներկայացված բողոքով, «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ նաև՝ Մրցույթ) ընթացքում անցկացված բանակցությունների ընթացքում «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից որպես վերջնական գնային առաջարկ ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը՝ 11,100,000.0 ՀՀ դրամը՝ ներառյալ ԱԱՀ: Վերոհիշյալ ձևաչափով գնային առաջարկ ներայացնելը (հնչեցված գնային առաջարկը ներառում է նաև ԱԱՀ) որոշվել է գնահատող հանձնաժողովի կողմից՝ բանակցությունների մասնակիցների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա:

Սակայն www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման (կցվում է) համաձայն՝ արձանագրվել է հետևյալը.

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	***Մասնակցի անվանումը***	***Ընտրված մասնակից*** */ընտրված մասնակցի համար նշել "X"/*	***Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, հազ. դրամ/***
1	*«Էփրան» ՍՊԸ*	*X*	*7,000,000.0*
2	*ՍՊԸ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» / ACE Automation LLC*		*7,177,945.95*
3	*«Արհովշին» ՍՊԸ*		*9,208,333.333*
4	*«Ռուսատոմ Սերվիս» ԲԸ*		*9,625,000.0*
4	*«Էկրա Կովկաս» ՍՊԸ*		*9,625,000.0*
5	*«Կասկադ Էներգո» ՍՊԸ*		*10,833,333.333*

6	***«ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ***		***11,100,000.0***
7	*«Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ*		*12,540,000.0*

Այսպիսով, www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կոմից սահմանված կարգի համաձայն ներկայացված և ԱԱՀ գումարը ներառող գնային առաջարկը դիտարկվել է որպես առանց ԱԱՀ ներկայացված գնային առաջարկ, համեմատությունը իրականացվել է հենց այդ թվի հետ /չի հանվել ԱԱՀ գումարը/, և համապատասխանաբար որոշվել է, որ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ն զբաղեցնում է 6-րդ տեղը:

Գտնում ենք, որ www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի մասով, չի համապատասխանում ՓԲԸ-ի կողմից բանակցությունների արդյունքում հնչեցված գնային առաջարկին, քանի որ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի գնային առաջարկից՝ 11,100,000.0 ՀՀ դրամը՝ ներառյալ ԱԱՀ, չի հանվել ԱԱՀ գումարը և ճիշտ չի բաշխվել մասնակցի տեղը տվյալ Մրցույթում:

Մասնավորապես, եթե «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի գնային առաջարկից՝ 11,100,000.0 ՀՀ դրամը՝ ներառյալ ԱԱՀ, հանվի ԱԱՀ գումարը, ապա «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ն կզբաղեցնի ոչ թե գնահատող հանձնաժողովի կողմից արձագրված 6-րդ, այլ 4-րդ տեղը:

Նման պարագայում գտնում ենք, որ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի համար սկզբունքային չէ ոչ բանակցությունների արդյունքների չեղարկումը, ոչ էլ նոր բանակցությունների անցկացումը, քանի որ խնդիրը վերաբերվում է բացառապես պայմանագիր կնքելու որոշմանը՝ ՓԲԸ-ի վերաբերյալ կայացրած մասով:»:

Ելնելով վերոգրյալից՝ սույն բողոքի փոփոխությամբ «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ն ներկայացնում է նոր բողոքի պահանջ և խնդրում չքննարկել ՓԲԸ-ի կողմից 2021թ. բողոքով ներկայացված պահանջները:

Ներկայացված նոր պահանջներով՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին վերահաշվարկել «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից

բանակցությունների արդյունքում ներկայացրած ԱԱՀ-ն ներառող գնային առաջարկը՝ 11,100,000.0 ՀՀ դրամը, վերոհիշյալ թվից հանելով ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ԱԱՀ գումարը (16.67 % հաշվարկային դրույքաչափը):

3. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին «Պայմանագիր կնքելու մասին որոշմամբ» «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ին ճանաչել Մրցույթով 4-րդ տեղ զնաբեղացրած մասնակից:

4. <u>«Էփրան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Էփրան» ՍՊԸ-ն 23.11.2021թ.-ին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Էկրա Կովկաս» ՍՊԸ, «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ, «Էփրան» ՍՊԸ, «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ, «Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ, «Արհովշին» ՍՊԸ, «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ, «Կասկադ էներգո» ՍՊԸ և «ՌԵՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետով արձանագրվել է, որ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «դ» պարբերությունների համաձայն՝ Ընթացակարգի մասնակիցները ս/թ. հոկտեմբերի 5-ին հրավիրվում են առաջարկված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման, որի տևողությունը սահմանվում է 30 րոպե:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.10.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Էփրան» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/75 որոշմամբ մրցույթի գնահատող հանձնաժողովը պարտավորվել է դադարեցնել 05.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները և անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ:

5. Վերոնշյալ որոշման հիման վրա՝ 10.11.2021 թվականին կրկին տեղի են ունեցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ: Նշված բանակցությունների արդյունքում «Էփրան» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

6. Միաժամանակ, թիվ 6 արձանագրության 6-րդ կետով նշվել է, որ «ԷՅՍԻԻ Աուտոմեշյն» ՍՊԸ-ի կողմից տրամադրված լիազորագիրը ստորագրված չէ, ինչպես նաև կցված չէ լիազորված անձի անձնագիրը, որպիսի պարագայում բանակցությունների ժամանակ կատարված նոր գնային առաջարկները չեն դիտարկվել: Նույն տեղեկատվությունը զետեղված է նաև արձանագրության 7-րդ կետում:

ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար

նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները . . . :

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար:

Նույն օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Ամփոփելով վերոգրյալը փաստում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 6-րդ արձանագրությամբ իրավունք չուներ «ԷՅՍԻԻ Աուտոմեշյն» ՍՊԸ-ի կողմից բանակցությունների ժամանակ կատարված նոր գնային առաջարկները ընդունել և դրա հիման վրա իրականացվեր նոր գնային առաջարկներ մյուս մասնակիցների կողմից:

Ուստի փաստում ենք, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 6 արձանագրությունը կայացվել է վերընշված օրենքների խախտումներով:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Էփրան» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 10.11.2021թ-ի տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները,

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ:

5. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.11.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19039-2021 և 23.11.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19156-2021 գրություններով դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի և «Էփրան» ՍՊԸ-ի կողմից համապատասխանաբար 19.11.2021թ.-ին և 23.11.2021թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «ՆՊԿ էլլիրոն» ՓԲ և «էփրան» ՍՊ ընկերությունների բողոքների քննության նպատակով Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) գրավոր դիրքորոշումը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքներ»-ի ձեռք բերման նպատակով ս/թ օգոստոսի 3-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ՝ ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ են ներկայացրել նաև բողոքաբերներ «ՆՊԿ էլլիրոն» ՓԲ (ЗАО «НПК Эллирон») և «էփրան» ՍՊ ընկերությունները: Գնման ընթացակարգը հրապարակված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, որը իրենից ենթադրում է, որ բավարար գնահատված մասնակիցները պետք է հրավիրվեն առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների անցկացման:

Գնման ընթացակարգին բավարար գնահատված մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցները ս/թ նոյեմբերի 5-ին (երկրորդ անգամ) հրավիրվել են առաջարկված գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցությունների:

Բանակցություններից հետո (քանի որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն լիազորագիրը ուղարկվել է գրեթե անմիջապես բանակցություններից առաջ) մանրամասն ուսումնասիրելով «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը արձանագրվել է, որ այն

ստորագրված չէ (առկա է միայն կնիք), ինչպես նաև կցված չէ լիազորված անձի անձնագիրը: Հաշվի առնելով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ բացի գնային առաջարկից մնացյալ փաստաթղթերը ենթակա են շտկման, գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն ծանուցվել է (և՝ էլեկտրոնային հասցեին, և՝ armeps համակարգից ոչ ավտոմատ ծանուցում ուղարկելու միջոցով) մեկ աշխատանքային օրվա ընթացքում լիազորագրի շտկման անհրաժեշտության մասին: Քանի որ սահմանված մեկօրյա ժամկետում չի ներկայացվել ՀՀ օրենսդրությանը համապատասխան լիազորագիր, «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից բանակցությունների ժամանակ կատարված նոր գնային առաջարկները չեն դիտարկվել (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդված), որը արձանագրված է գնահատող հանձնաժողովի ս/թ նոյեմբերի 10-ի թիվ 6 արձանագրությամբ: Հետևաբար «Էփրան» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է:

Բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկը՝ 8,400,000,000.0 (ութ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ստացվել է «Էփրան» ՍՊԸ-ից և ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Բանակցությունների արդյունքում «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ն կատարել է գնային առաջարկի նվազեցում՝ առաջարկելով 11,100,000,000.0 ՀՀ դրամ և համաձայն գնահատող հանձնաժողովի՝ ս/թ նոյեմբերի 10-ի թիվ 6 արձանագրության զբաղեցրել է 6-րդ տեղ:

Ստորև ներկայացնում եմ Գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումների իրավական հիմքերը և հիմնավորումները և խնդրում եմ բողոքների հետ կապված որոշման կայացման ժամանակ դիտարկել դրանք.

-ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն «մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման»:

-Սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ «Պայմանագրի կատարման փուլում առաջացող՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերը՝ այդ

թվում ԱԱՀ, հաշվանցվում և ՀՀ պետական բյուջե են վճարվում վճարման ենթակա գումարից, ինչպես նաև հաշվանցվում են Պատվիրատուի կողմից Կատարողի փոխարեն կատարված մաքսազերծման, լոգիստիկ կամ ցանկացած այլ ծառայության դիմաց վճարները»:

-«Գնումների մասին» ՀՀ օրենիքի 39-րդ հոդվածի 1-ին մաս «Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը»:

-Գնման ընթացակարգի մասնակիցներից «ՆՊԿ էլլիրոն» ՓԲ և «Չինական էլեկտրա էներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊ ընկերությունները իրենց գնային առաջարկները (Հավելված 2) ներկայացրել են առանց ԱԱՀ (սույն դաշտում նշված է 0):

-«Գնումների մասին» ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ դրույթ, որով ուղղորդվելով, գնահատող հանձնաժողովը պետք է առանց ԱԱՀ (կամ ԱԱՀ դաշտում 0 լրացված, որը նույնպես թիվ է) ներկայացված գնային առաջարկից հանի ԱԱՀ-ն (0-ից տարբերվող թիվ) և ապա համեմատի ԱԱՀ վճարող (սույն դաշտը 0-ից տարբերվող թվով լրացրած) մասնակցի գնային առաջարկի հետ:

- ՀՀ Հարկային օրենսգիրքը սահմանում է տարբեր դրույթներ ոչ ռեզիդենտների հարկերի վճարման կարգի հետ կապված: Օրինակ, ՀՀ Հարկային օրենսգրքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝

9) եթե Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը Հայաստանի Հանրապետությունում ունի հաշվառված մշտական հաստատություն, ապա այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը պարտավոր է Հայաստանի Հանրապետությունում գտնվող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի հաշվառված մշտական հաստատության մասով վարել ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, հարկի գումարների, Օրենսգրքով սահմանված նվազեցումների և հաշվանցվող (պակասեցվող) գումարների առանձնացված հաշվառում:

Որից երևում է, որ վերը նշված դեպքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն չի համարվի տվյալ ընկերության համար հարկային գործակալ և չի կատարի ընկերության փոխարեն վճարներ (այդ թվում լոգիստիկ և այլն):

-Բողոքաբեր «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ն հղում կատարելով ԵԱՏՄ պայմանագրի 18-րդ դրույթին և ՀՀ Հարկային օրենսգրքին նշում է, որ ընկերությունը պետք է հարկ վճարի ՀՀ պետական բյուջե: Նշված դրույթները ընդունվել են համապատասխան մարմինների կողմից մինչ «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից մասնակցության հայտ ներկայացնելը, հետևաբար ընկերությունը քաջ գիտակցել է իր կողմից տրվող գնային առաջարկի նշված դրույթներին համապատասխան լինելը, ինչպես նաև դրանից բխող հետևանքները:

-«Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ դրույթ, որի համաձայն հանձնաժողովը պետք է գնահատի մասնակցի՝ ՀՀ պետական բյուջե ԱԱՀ վճարող լինելու հանգամանքը:

-Գնման ընթացակարգի մասնակից «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ս/թ հոկտեմբերի 11- ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին սույն գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացվել էր բողոք: Ներկայացված բողոքով «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն անդրադարձել է նաև «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի գնային առաջարկին, նշելով.

««ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից հնչեցրած վերջնական գնային առաջարկը՝ 13250000000 ՀՀ դրամը, անհասկանալիորեն գնահատող հանձնաժողովի կողմից դիտարկվել է որպես առանց ԱԱՀ գումար և չի ներկայացվել 13250000000 ՀՀ դրամը՝ առանց ԱԱՀ, և դրան համապատասխան կատարվել իր գնային առաջարկի համեմատությունը: Մինչդեռ մյուս ոչ ռեզիդենտ ընկերությունների կողմից հնչեցրած գնային առաջարկներից հանվել է ԱԱՀ գումարը, կատարվել է համապատասխան հաշվարկ, ներկայացվել է առանց ԱԱՀ գումարը և մասնակցի տեղերը բաշխվել են՝ ըստ համապատասխան գների: Օրինակ, ոչ ռեզիդենտ ընկերություն հանդիսացող «Ռոաատոմ Մերկիս» ԲԸ-ի հնչեցրած գնային առաջարկից՝ 13750000000 ՀՀ դրամից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հանվել է ԱԱՀ գումարը և ստացվել է առանց ԱԱՀ գնային առաջարկ և միայն նոր այդ թիվը համեմատվել մյուսների գնային առաջարկների հետ, ինչը չի կատարվել «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից հնչեցրած վերջնական գնային առաջարկի հետ:

Վերոհիշյալի արդյունքում հանձնաժողովը դրսևորել է խտրական մոտեցում մասնակիցների նկատմամբ, բանակցությունների անցկացման ժամանակ չի ապահովել միասնական կանոններով և ոչ խտրական հիմունքներով բանակցությունների անցկացում, մասնակիցների համար մասնակցելու իրավահավասարություն, որն իր հերթին հանգեցրել է գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքի խախտմանը»:

«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի վերը նշված դիտարկմանն ի պատասխան բողոքներ քննող անձը արձանագրել է.

«Սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Տվյալ դեպքում «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ն, ի տարբերություն մյուս ոչ ռեզիդենտ ընկերությունների, բացառությամբ «Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյոսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ-ի, ընթացակարգին ներկայացրած հայտով գնային առաջարկում ՍԱՀ-ն նախատեսել է 0, հետևաբար նման պայմաններում բանակցության ընթացքում առաջարկած գնից ՍԱՀ-ի գծով վճարվելիք գումարի առանձնացնելու և նիստի արձանագրությամբ արձանագրելու իրավասությամբ գնահատող հանձնաժողովը օժտված չէ»:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 41-րդ կետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հողված, որից բխում է, որ բողոքաբերների կողմից նշված կետերը, որոնք բողոքաբեր ընկերությունները վերագրում են մրցակցության իրավունքի խախտմանը՝ ճիշտ հակառակն են, իսկ գնահատող հանձնաժողովի հիմնական գործառույթներից է առավելագույն մասնակիցների քանակ ապահովելը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք 3-րդ հոդվածի 1-ին մաս

1) տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն՝ տնտեսավարող սուբյեկտների մրցություն, որի պայմաններում նրանցից յուրաքանչյուրի ինքնուրույն գործողություններով օբյեկտիվորեն բացառվում կամ սահմանափակվում է համապատասխան ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա միակողմանի ազդելու հնարավորությունը:

5-րդ հոդվածի 1-ին մաս

/. Սույն օրենքի իմաստով՝ հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց բանավոր կամ գրավոր այն համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսավարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքերի:

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք դրույթներ ևս, մասնավորապես.

Քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Անդրադառնալով բողոքաբեր «էփրան» ՍՊԸ կողմից ներկայացված պահանջներին Ձեր ուշադրությունն եմ ցանկանում գրավել այն հանգամանքի վրա, որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի բանակցությունների ժամանակ կատարած գնային առաջարկը չի դիտարկվել (սակայն «էփրան» ՍՊԸ-ն նշում է, որ հանձնաժողովը իրավունք չուներ ընդուներ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից կատարված գնային առաջարկը) հետևաբար առկա չէ «էփրան» ՍՊԸ-ի շահերի ոտնահարում: Ավելին «էփրան» ՍՊԸ-ն իր դժգոհությունն է հայտնել երկրորդ անգամ բանակցությունների անցկացման վերաբերյալ (նամակը կցվում է), ինչպես նաև դիմել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ բողոքարկելով բողոքը քննող անձի որոշումը երկրորդ անգամ բանակցություն կազմակերպելու հետ կապված: Հետևաբար անհասկանալի է դառնում «էփրան» ՍՊԸ-ի նպատակը նոր (երրորդ) բանակցությունների անցկացման հետ կապված (ընկերությունը հակասում է ինքն իրեն): Ըստ էության բողոքաբերը վիճարկելով 6-րդ արձանագրությունը վիճարկում է նաև իր՝ ընտրված մասնակից ճանաչված լինելը և իր պայմանագիր կնքելու

իրավունքը՝ չբերելով ոչ մի իրավական փաստարկ այդ պայմանագրի կնքումը վիճարկելու վերաբերյալ:

Անդրադառնալով բողոքաբեր «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի բողոքին ցանկանում եմ տեղեկացնել, որ «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի գնային առաջարկը ընդունվել է ներառյալ ԱԱՀ տարբերակով: Հանձնաժողովը պատասխանատվություն չի կարող կրել մասնակցի կողմից ԱԱՀ դաշտում լրացված զրո թվի համար, որի հետևանքով մասնակցի գնային առաջարկը առանց ՍՍՀ և ներառյալ ԱԱՀ դեպքում ստացվում է նույն թիվը: Վերլուծելով ներկայացված բողոքը՝ հանգում եմ այն եզրահանգմանը, որ «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ն տալով սխալ գնային առաջարկ (ոչ շահավետ իր համար) ցանկանում է հանձնաժողովին պարտավորեցնել կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումներ:

Ամփոփելով վերը նշվածը՝ խնդրում եմ երկու բողոքները ամբողջությամբ մերժել այն պարզ պատճառով, որ բողոքները հիմնազուրկ են և իրավազուրկ: Ընտրված մասնակից ճանաչված անձի և նրան գնահատման ընթացքում չկա «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների ոչ մի խախտում, իսկ բողոքաբեր «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի իրավունքները ոչ ոք չի կաշկանդել, որպեսզի բողոքաբերը ավելի մրցակցային գին ներկայացնի: Կարծում եմ, բողոքաբեր անձանց բողոքները անհիմն են, քանի որ գնահատող հանձնաժողովը գործել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված նորմերով՝ ապահովելով գնման գործընթացի մրցակցային, համաչափ և ոչ խտրական կազմակերպումը:»:

6. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/106 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 13.09.2021թ.-ին:

ii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ն, «Էփրան» ՍՊԸ-ն և «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 05.10.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, մասնակիցների բանակցությունների ժամանակ կատարած գնային առաջարկների հիման վրա, փաստաթղթերի գնահատման արդյունքում, որոշել է «էփրան» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել կնքել ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքների կատարման պայմանագիր:

v. www.gnumner.am համացանցային կայքում 07.10.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 10 օրացուցային օր անգործության ժամկետ:

vi. «էփրան» ՍՊԸ-ն ընտրված մասնակից է ճանաչվել՝ ներկայացնելով 8,400,000,000.0 ՀՀ դրամ գումարի նվազեցված գնային առաջարկ:

vii. Ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտ ներկայացրած «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 11.10.2021թ.-ին ներկայացվել է բողոք, որով վերջինս խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 05.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները,

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ:

viii. Բողոքներ քննող անձի կողմից 22.10.2021թ. կայացվել է թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/75 որոշումը, համաձայն որի՝

Պարտավորեցվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 05.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները, անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ:

ix. Հանձնաժողովի 02.11.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, քննարկելով «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից 11.10.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2021/75 ծածկագրով բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 22.10.2021թ.-ին կայացրած որոշումը, որոշել է 05.11.2021թ.-ին անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ:

x. Հանձնաժողովի 10.11.2021թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ բանակցությունից հետո (քանի որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն լիազորագիրը ուղարկվել է գրեթե անմիջապես բանակցություններից առաջ) մանրամասն ուսումնասիրելով «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը արձանագրվել է, որ այն ստորագրված չէ (առկա է միայն կնիք), ինչպես նաև կցված չէ լիազորված անձի անձնագիրը: Հաշվի առնելով նշվածը՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցրել է և «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն ծանուցել է (և՛ էլեկտրոնային հասցեին, և՛ armeps համակարգից ոչ ավտոմատ ծանուցում ուղարկելու միջոցով) մեկ աշխատանքային օրվա ընթացքում լիազորագրի շտկման անհրաժեշտության մասին:

Նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ ծանուցումը ուղարկվել է 08.11.2021թ.-ին, ուստի նոյեմբերի 9-ի ընթացքում «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն պետք է ուղարկեր շտկված լիազորագիրը անձնագրի հետ միասին, սակայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից չի ստացվել շտկված լիազորագիրը և լիազորված անձի անձնագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից բանակցությունների ժամանակ կատարված նոր գնային առաջարկները չեն դիտարկվի, քանի որ չի ներկայացվել ՀՀ օրենսդրությանը համապատասխան լիազորագիր:

xi. Նույն արձանագրության 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ բացի այն որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն բանակցությունների ավարտին հայտարարում է, որ այլևս գնային առաջարկ չունի, որից հետո ZOOM հավելվածի տեքստային հաղորդագրությունների դաշտում նշում է նոր գնային առաջարկ (8,350,000,000.0 ՀՀ դրամ), տեսաձայնագրությունից ակնհայտ է դառնում, որ բանակցությունների 30-րդ րոպեն լրացել է 13:12:22-ին, իսկ տեքստային հաղորդագրությունների ավտոմատ գեներացված ֆայլից երևում է, որ նոր գնային առաջարկը ստացվել է 13:12:59-ին միայն, հետևաբար բանակցությունների արդյունքում

«ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի որպես վերջի գնային առաջարկ կարող էր դիտարկվել մինչ այդ հնչեցրած 8,450,000,000.0 ՀՀ դրամը: Ինչպես նշվել է 6-րդ մասում «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի բանակցություններին կատարած գնային առաջարկը չի դիտարկվում: Փաստաթղթերի գնահատման արդյունքում «էփրան» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել կնքել ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքների կատարման պայմանագիր:

xii. www.gnumner.am համացանցային կայքում 12.11.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 10 օրացուցային օր անգործության ժամկետ:

xiii. «էփրան» ՍՊԸ-ն ընտրված մասնակից է ճանաչվել՝ կրկին ներկայացնելով 8,400,000,000.0 ՀՀ դրամ գումարի նվազեցված գնային առաջարկ:

xiv. «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից բանակցությունների ժամանակ ներկայացված 05.11.2021թ.-ին թվագրված լիազորագրում առկա է ընկերության կնիքը, սակայն ստորագրված չէ:

xv. «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից բանակցություններից հետո՝ 10.11.2021թ.-ին ներկայացված 10.11.2021թ.-ին թվագրված լիազորագրում առկա է ընկերության կնիքը, և այն ստորագրված է: Ինչպես նաև առկա է լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի պատճենը:

7. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից 19.11.2021թ.-ին ներկայացված բողոքն ու «Էփրան» ՍՊԸ-ի կողմից 23.11.2021թ.-ին ներկայացված համանման բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ … հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա

հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը

սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակվում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով

միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու

ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին: Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Նախկին որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ըստ էության հանդիսանալով միակողմանի գործարք՝ լիազորագիրը լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝

լիազորագրողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը, իսկ լիազորագրողի (պարտատիրոջ) համար սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած հանձնարարությունը (պարտավորությունը) *(տե՛ս, Վարդուշ Ղազարյանն ընդդեմ Գևորգ Ղազարյանի թիվ ԼԴ/0423/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ լիազորվողն օգտվում է լիազորագրի շրջանակներում լիազորագրողի կողմից իրեն վերապահված գործողություններ կատարելու իրավունքից, որը հստակ ձևակերպվում է լիազորագրի բովանդակությունում և երրորդ անձանց հնարավորություն է տալիս հստակ եզրակացնել, թե լիազոր ներկայացուցիչն ինչպիսի իրավազորությամբ է օժտված *(տե՛ս, «Վաղարշ և որդիներ Կոնցեռն» ՍՊԸ-ն ընդդեմ Մարինա Հայրապետյանի, Կարեն, Վարդգես, Ինա Եղիազարյանների և Ամալյա Բագրատունու թիվ ԵԿԴ/1769/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ լիազորագիրը միակողմանի գործարք է, որով սահմանվում են ներկայացուցչի իրավունքները, լիազորությունների շրջանակը, ինչպես նաև լիազորագրողի անունից երրորդ անձանց հետ հարաբերությունների մեջ մտնելու այլ պայմանները *(տե՛ս, Հայկ Շեկյանի ընդդեմ Ռազմիկ Կարապետյանի, Մարինե Խաչատրյանի, Աննա Խաչատրյանի թիվ ԵԱՔԴ/2401/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2020 թվականի որոշումը)*::

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.08.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ն, «Էփրան» ՍՊԸ-ն և «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 10.11.2021թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների: Բանակցությունից հետո (քանի որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն լիազորագիրը ուղարկվել է գրեթե անմիջապես բանակցություններից առաջ) մանրամասն ուսումնասիրելով «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը արձանագրվել է, որ այն ստորագրված չէ (առկա է միայն կնիք), ինչպես նաև կցված չէ լիազորված անձի

անձնագիրը: Հաշվի առնելով նշվածը՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցրել է և «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն ծանուցել է (և՛ էլեկտրոնային հասցեին, և՛ armeps համակարգից ոչ ավտոմատ ծանուցում ուղարկելու միջոցով) մեկ աշխատանքային օրվա ընթացքում լիազորագրի շտկման անհրաժեշտության մասին: Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ ծանուցումը ուղարկվել է 08.11.2021թ.-ին, ուստի նոյեմբերի 9-ի ընթացքում «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն պետք է ուղարկեր շտկված լիազորագիրը անձնագրի հետ միասին, սակայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից չի ստացվել շտկված լիազորագիրը և լիազորված անձի անձնագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից բանակցությունների ժամանակ կատարված նոր գնային առաջարկները չեն դիտարկվի, քանի որ չի ներկայացվել ՀՀ օրենսդրությանը համապատասխան լիազորագիր: Գնահատող հանձնաժողովը արձանագրել է նաև, որ բացի այն որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն բանակցությունների ավարտին հայտարարում է, որ այլևս գնային առաջարկ չունի, որից հետո ZOOM հավելվածի տեքստային հաղորդագրությունների դաշտում նշում է նոր գնային առաջարկ (8,350,000,000.0 ՀՀ դրամ), տեսաձայնագրությունից ակնհայտ է դառնում, որ բանակցությունների 30-րդ րոպեն լրացել է 13:12:22-ին, իսկ տեքստային հաղորդագրությունների ավտոմատ գեներացված ֆայլից երևում է, որ նոր գնային առաջարկը ստացվել է 13:12:59-ին միայն, հետևաբար բանակցությունների արդյունքում «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի որպես վերջի գնային առաջարկ կարող էր դիտարկվել մինչ այդ հնչեցրած 8,450,000,000.0 ՀՀ դրամը: Ինչպես նշվել է 6-րդ մասում «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի բանակցություններին կատարած գնային առաջարկը չի դիտարկվում: Փաստաթղթերի գնահատման արդյունքում «Էփրան» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել կնքել ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքների կատարման պայմանագիր:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով Հանձնաժողովի 10.11.2021թ.-ի նիստի թիվ 6 արձանագրությունը, «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից 05.11.2021թ.-ին բանակցությունների ժամանակ և ապա դրանից հետո ներկայացված 10.11.2021թ.-ի լիազորագիրը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ին բանակցությունների անցկացման փուլում լիազորագրում առկա անհամապատասխանության շտկում, Կարգի 41-րդ կետի իմաստով, Հանձնաժողովը չէր կարող ներկայացնել, քանի որ ինչպես վկայակոչված նորմից է բխում, այն կիրառելի է միայն հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում: Ընդ որում, այդ անհամապատասխանությունները պետք է դիտարկվեն հրավերի պահանջների շրջանակներում, և պետք է անհամապատասխանություններն արձանագրվեն դրանց նկատմամբ, այլ ոչ թե ՀՀ օրենսդրության, ինչպես նշվել է Հանձնաժողովի 6-րդ արձանագրությամբ:

Ավելին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բանակցությունների ժամանակ լիազորագրում տեղ գտած վրիպակի ուղղման (անհամապատասխանությունների շտկման) դրույթ սահմանված չէ, ոչ Օրենքով, ոչ էլ՝ Կարգով: Ուստի, նման պայմաններում, Հանձնաժողովի կողմից «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ին ներկայացրած լիազորագրի ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու համար տրամադրված ժամանակահատվածը չէր կարող սահմանափակվել 1 (մեկ) աշխատանքային օրյա ժամկետով:

Անդրադառնալով «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից 05.11.2021թ.-ին բանակցություններից առաջ և ապա դրանից հետո 10.11.2021թ.-ին ներկայացված լիազորագրին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ներկայացված լիազորագրի բովանդակությունը լիարժեք թույլ էր տալիս լիազորված անձին մասնակցել Պատվիրատուի կողմից կազմակերպված միաժամանակյա բանակցություններին: Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի իրավակարգավորումներից, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 05.11.2021թ.-ին բանակցությունից առաջ և ապա դրանից հետո 10.11.2021թ.-ին ներկայացված լիազորագիրը, որպես միակողմանի գործարք, համապատասխանում է նաև Օրենսգրքի՝ միակողմանի գործարքների ձևին և բովանդակությանը վերագրվող պահանջներին: Այն կնքված է փաստաթուղթ կազմելու միջոցով, արտահայտում է գործարքի բովանդակությունը և «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի տնօրենի կամաարտահայտությունը՝ ուղղված ներկայացուցչի միջոցով իրավունք և պարտականություն ստեղծելուն, դադարեցնելուն կամ փոփոխելուն:

Ընդ որում, հարկ է փաստել, որ Կարգով և Հրավերով չեն սահմանվել լիազորագրի ձևի և բովանդակության վերաբերյալ լրացուցիչ պահանջներ, որոնց պետք էր այն համապատասխաներ (որոշակի ձևաթղթի վրա կնքելը և այլն):

Ամփոփելով վերոնշյալները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերության կողմից բանակցությունների ժամանակ ներկայացված լիազորագիրը (մեկ ամբողջությամբ վերցված) ներկայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … *վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը*:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ *«վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը»* ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության շրջանակն ու սահմանները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև հավելել, որ գնումների գործընթացի բողոքարկումը չպետք է լինի ինքնանպատակ և գնումների գործընթացի անհարկի հետաձգման պատճառ հանդիսանա: Պետական գնումների անհրաժեշտությունը պայմանավորված է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների պատշաճ իրականացման հրամայականով, և այդ գործընթացների անհարկի հետաձգումները կարող են արհեստական խոչընդոտներ ստեղծել նշված մարմինների ամենօրյա գործունեության համար:

Անդրադառնալով «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի և «Էփրան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքի իրավական ու փաստական այլ հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ դրանք անհիմն են՝ հիմք

ընդունելով Պատվիրատուի կողմից սույն բողոքարկման ընթացքում հայտնած իրավական ու փաստական հանգամանքները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.08.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի դրույթների կիրառման խախտումը, «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից շտկման մասին ծանուցմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո ստորագրված լիազորագիր ներկայացնելը չի կարող հանգեցնել «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի և «Էփրան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքի պահանջների բավարարմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՆՊԿ էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից 19.11.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/106 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:
2. «Էփրան» ՍՊԸ կողմից ներկայացված համանման բողոք մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**